

Իսկան զեղեցանց իւրաւունքն առջեւն առնելու համար «արժանաւոր հովիւները» պատարաստել եւն եւն. մէկ խօսքով իւր թեմական այցելութեանց ժամանակ եկեղեցականաց մասին ստացած տպաւորութիւնները սեւ գունով կը պարզէ վերին իշխանութեան առջեւ:

Գեղարք. Սեդրակեանի այս խիստ տեղեկագրութիւնը ի՞նչ է եղած Յ. Մեկեան ք.Տ.Ի իւր առաջիկայ Հատագրովականին հրապարակ նետուելուն Յ. Հեղինակս վերայիշեալ մատենին ղրկեալոր արդեան հանդիսանալով, կը ջանայ եկեղեցականաց վրայ բարդուած մեղադրանքն ի բաց թօթալել եւ զանոնք անպարտ հրատարակել, իբր այն թէ «Մարտակէս սրբազանն... դիմեմ է անցած գնացած ժամանակներին եւ, կոնստանտնուպոլիս (եկեղեցականաց խորհրդոյն) գործերից քաղելով, հանդէս է գնում» իրեն նկատողութիւն անող սինոդի ու կաթողիկոսի առաջ ահագին թուով կատարւած, բայց նկատողութեան չենթարկւած այնպիսի գործեր, որպիսիներէ համար խիստ նկատողութեան է արժանանում ինքը Սեդրակեանը» (20):

Մարտամանութեանց ի՞նչալ տեղոյս չի վերաբերի:

Հ. Գ. Գար.



ՓԵՂՏԵՐԵՐ ՏԵՄԱՐԱՐԵՐ

Վիեննա, 28 նոյեմբեր 1901:

Անգլիա-Տրանսիլաւ: — Բաղաքակրթեալ ազգաց պատմութեան մէջ նմանը չտեսնուած անագործութեամբ մղուած պատերազմը կորսնցրնել տուաւ երկամիայ միջոցին մէջ Մեծին Բրիտանիոյ տիեզերաց առջեւ դարերէ ի վեր վայելած յաղթանունը: Անաշուոյ դատուեցաւ պատմութեան երկաթեայ գաւազանաւ եւ դատաւարտուեցաւ իբր — անիրաւ...

„Solam internecionem gentis finem bello dare!“ — Գուցէ Ղոմայեցի զօրավարին (Գերմանիկոսի) պէս, ապիկար Անգլիան եւս ուզեց փորձ մը փորձել, Բարբարոս համարեալ Բուրբերը ընաշինել ընելով պատերազմին վերջ տալ: Փորձեց շարանար փորձը... Արդիւնքը — հարիւրաւոր, հազարաւոր անմեղ Բուր կանայք ու մանկունք մարդկային օգնութենէ զուրկ, մահուան երախքն ինկան եւ ղեռ իսկ կ'իշնան: Բայց ի՞նչ միթէ ատով մարդախոշոշն Անգլիա իւր դիտած վատ նպատակին հասան կամ թէ տակաւին հասնիլ — կ'ե-

րազէ... Տարակոյս չկայ որ իւր առած այս անխոհեմ՝ քայլին ունենալի տխուր հետեւութիւններն զգաց. սակայն ուշ էր այլ եւս դարման տանելու, երբ արդէն ընդդէմ Անգլիոյ ստեղծութեան խմորումը հոլանդացի տարրին ըլլոր խաւերուն մէջ տարածուած էր, եւ նոյն իսկ կապալանդաքնակ, երբեմն Անգլիոյ շերմ հպատակ Հոլանդացիք ընշաքաղց Անգլիացոց տեղացի անմեղ ժողովրդեան հատուցած անագորոյն բարբարոսութեանց այլ եւս տուկալ չկարենալով, առանց պատերազմական խիստ օրէնքներէ խիթալով՝ վրէժխնդրութեան դրօշը պարզեցին եւ արդէն 30.000 կտրիճ՝ Տրանսիլանցած են իրենց թշուառ դրացի Բուրերուն օգնելու:

Բանի մը շարքի յատալ անգլիական թերթերը մեծ ոգեւորմամբ հրատարակեցին Լորդ Կիլնըրի մէկ պաշտօնագիրը, որուն մէջ Անգլիացոց արհաւիրն Լ. Բոթայի գնդին խորտակուիլն ու հրամանատարին մագապուր ճողոպրիլը նկարուած էր: Սակայն ափսոս, որ այս վերապահեալ հասկանալի պաշտօնագրոյն ըովանդակութիւնը տարբեր կերպարանք առաւ, երբ նմանապէս Լորդին յատուկ ստորագրութեամբը հասած երկրորդ պաշտօնագիրն առաջնոյն ըլլորովին ներհակ, հետեւեալը կը ծանուցանէր. Լ. Բոթա մենեւիկ վստա կրած է: Հինքն իւր գնդովն հանդերձ պաշարել ուզող անգլիական կրկնապատիկ ստուար գնդին առջեւէն ի փախուստ դառնալով, ետեւի կողմանէ նոյն գնդին՝ Բէնսն վաշտապետին հրամանին տակ եղող վերջապահաց վաշտակին վրայ յարձակեցաւ ու չարաշար գարկաւ: Վաշտապետին հետ 8 պաշտօնակալ եւ 58 զինուոր մեռան, 15 պաշտօնակալ ու 158 զինուոր կարեւելք վիրաւորուեցան, երկու թնդանօթ ալ թշնամեաց ձեռք ինկաւ: Կապալտատէ հասած հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ, շատ մը Բուր զօրավարներ 500 հոգով մինչեւ Հոպֆիլդ են յառաջացած. որ է ըսել, Կապալտատէ քանի մը մղոն հեռաւորութեամբ դէպ ի հիսիս:

Ասիա: — Աֆղանստանի Էմիրը — Ալատորահման, որ քանի մ'ամսէ ի վեր ծանր հիւանդ էր, Հոկտ. Յին վախճանեցաւ 56 տարեկան: Հանգուցեալն Անգլիոյ

կատարութենէն Աֆղ-ի Էմիրը ճանշարուած Ասալ Խանին որդին էր, 1845ին ծնած: Իւր հայրենեաց մէջ ծագած ինչ ինչ խռովութեանց պատճառաւ, ստիպուեցաւ բաւական ժամանակ Սմրղանտ բնակիլ, ուր Ռուսի պետութիւնն իրեն բաց ի բնակարանէ առնիկ եւս կապեց: Կարուի անգղիական ղեսպանին սպանմամբն (1879 Սեպտ. 3) երբ Ռոբէրտս զօրավարը քաղաքը գրաւեց, զԱպտուրրահման Աֆղ-ի Էմիր կարգեց: Վերջինս 1881ին Հերատի իշխանութիւնն եւս ձեռք ձգեց: Հաքիբուլ-լաւ Խան իւր հօրը յաջորդեց:

Ապտուրրահմանի մանն Աֆղ-ի ճակատագրին վրայ — որչափ կ'երեւայ — առանց ծանր հետեւանք ունենալու պիտի շանցին: Անգղիա համա աշըղ լի կրնար դիտել ռուսական 40.000 սպառազէն զօրաց երկրին հիւսիսային սահմաններուն վրայ բանակիր: Այսպիսի պարագայից մէջ Անգլիոյ գլխաւոր հոգը կրնայ ըլլալ միայն Հնդկաստանն ու կենդրոնական Ասիոյ հետ ունեցած պաճառակնական յարաբերութիւններն պահապել ընդդէմ Ռուսիոյ: Առ այս սակայն հարկ է իրեն Հնդկաստանի դուռն եղող Հերատ ամուր քաղաքը ձեռք ձգել. սակայն իրաց արդի փինակէն չափելով Անգլիոյ համար այդ — ի՞նչ ոչ անհնարին — գոնեայ շատ դժուարին գործք է: Զօրաց պակասութիւնը զգալի է. անգլ.-հնդկական զօրաբանակներու մեծագոյն մասը հարաւային Ափրիկէ զբաղած է, իսկ Հնդկաստան գտնուող ոչ լաւ սպարազինեալ միւս բանակները՝ ներքին խաղաղութիւնը պահելու չափ կարողութիւն ունին, ուստի եւ ի փինակի չեն Աֆղ. արշաւելու: — Ռուս թերթերն այս ամէն պարագաները դիտելով, զԱֆղ. բախտին ընծեոած ճրի մէջ պարզեւր կը նկատեն եւ նոյնին գրաւումը կ'ուզեն ըստ կարելոյն փութադնել:

Ծննատան ամսոյս 7ին սգաց յանձին Լի-հունգ-Չանգի իւր ամենանշանաւոր դիւանագէտը: Հանգուցեալն իւր հայրենեաց քաղաքական պատմութեան մէջ վաթսնական թուականէն սկսեալ մեծ դեր էր խաղացած թէ՛ իբր քաջ զօրավար եւ թէ՛ գլխաւորաբար իբր փորձառու դիւանագէտ:

Ծնաւ 1823ին. 1859ին ծագած Տայ

պինգի ապստամբութեան ժամանակ հայրենիքն ընդդէմ ապստամբաց պաշտպանելուն փոխարէն նախ նահանգապետի քարտուղար կարգուեցաւ եւ յետոյ գաւառական դատարար եւ քիչ մ'ետքը Կիանգ-սուի կուսակալ: “Նրկնային կայսրութեան”, մէջ իւր անունն անմահացնող դիւանադարութիւնը՝ 1872ին վրան առաւ, որուն վրայ աւելցաւ յետոյ նաեւ փոխարքայ Կանտոնի: Լի-հունգ-Չանգ Նւրպա բրած այցելութեամբ լաւ ուսումնասիրեց եւրոպական դիւանագիտութիւնը: Ծննատան իւր վերջին խռովութեանց վտանգաւոր կերպարանք մը լառնուլը մեծաւ մասամբ իւր դիւանապետին փորձառութեան պարտական է:

Կորմբիոյ հասարակապետութեան մէջ ծագած ներքին խռովութիւնը տակաւին կը շարունակուին: Ալքանի առաջնորդութեան տակ եղող կառավարութեան զօրքը՝ յեղափոխականներէ յաղթուեր է: Վերջերս Կորնէ հասած հեռագրէ մը կը տեղեկանանք, թէ կառավարութեան զօրքն 300 հոգի Բուէնամպիսառ քաղաքը յարձակելով յեղափոխականաց հետ կը զարնուին: Ընդհարումը բուռն զօրութեամբ մինչեւ իրիկուն կը տեւէ: Կառավարութեան զօրքը կը յաղթուի, դաշտի վրայ թողլով 100 մեղեալ եւ վիրաւոր:

ԲՈՒՆԵՆԿԱՅԻՆ ԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԵՆԿԱՅԻՆ

ՄԱՏՆԵՆԿԱՅԻՆ — «Վտակ», 353:

ԹՂԵՆԿԱՅԻՆԹԻՒՆ — Գրական թղթակցութիւններ.

356: — Գրասխիւանիոյ ազգայնոց փափաքը. 358:

ԼԵՋՈՒՄԱՆԿԱՅԻՆ — Հիւքման եւ իւր նոր «հայական» ք. 359:

ՀԱՆԳՆԵՆԿԱՅԻՆ — Մարտադ Ս. Գրոց մէջ. 364:

ՊԱՏՄԱՆԿԱՅԻՆ — Մանուէլ Ս. Գաղտնալուծան. 370:

ԳՆԱՐՈՒՆԵՆԿԱՅԻՆ — Մեր պատկերները (պատկերազարդ). 375:

ԳՆԱՐԱՅԻՆ 4. Գ. Վ. Մ. — Ալիշան 4. 380:

ԳՐԱՅԻՆ — Գրութեանց վրայ դիտողութիւն. 381:

ՆԵՐՈՒՄԱՆԿԱՅԻՆ

ՆՈՐ ԴՐԱՄԱՐԱՅԻՆԹԻՒՆ. 381:

ԳՆԱՅԻՆ ԵՆՈՒՄԱՆԿԱՅԻՆ 383:

ԴՐԱՄԱՐԱՅԻՆ ԵՆ ԳՆԱՄԱՐԱՆԱՅԻՆ ԵՆ ԴՐԱՄԱՐԱՐ

Գ. ՈՒՍՈՒՄՆԵՆԿԱՅԻՆ

ԳՆԱՅԻՆ. ՄԻՒՄԱՐԱՅԻՆ ԵՆ ԳՆԱՐԱՅԻՆ

